



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՅԱՆՈՒՄԻ ԱՐԵՄՍՏԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ՏՕՆԱԿԱՆ ՄԹՆՈՒՆՐՏ ԱՐԵՄՍՏԱՆ ՄԵՐ ԹԵՄԻՆ ՄԷՋ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀՈԿԵՆՈՒՄԵՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՍԿՍԱԲ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՄԲ

Լոս Անճելըս իր ժամանման վաղորդայնին, Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս մեր թեմին իր հովուապետական չորրորդ այցելութիւնը պաշտօնապէս սկսաւ Հինգշաբթի, 6 Հոկտեմբերի առաւօտուն, Ազգային Առաջնորդարան այցելութեամբ:

Վեհափառ Հայրապետին ներկայութիւնը տօնական մթնոլորտ ստեղծած է մեր թեմին մէջ: Արդարեւ, Ազգային Առաջնորդարանը Հինգշաբթի օր ապրեցաւ ցնծութեան օր մը, որուն մասնակից եղան մեր թեմի ժողովականութիւնը՝ իր հոգեւորական ու աշխարհիկ ընտանիքներով: Առաւօտէն սկսեալ, ու մինչեւ յետմիջօրէի ժամերը, աննախընթաց եռուզեռ կը տիրէր Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ. հոգեւորականաց դասը, Ազգ. Վարչութեան անդամներ ու անոնց անմիջական գործակիցները, դաստիարակներ ու միութեանց ներկայացուցիչներ ժամադրուած էին դիմաւորելու Վեհափառ Հայրապետը, որուն շնորհաբեր այցելութիւնը պատմական հանգրուան մը կը կերտէ մեր ափերուն:

Նորին Ս. Օծութիւնը Ազգային Առաջնորդարան ժամանեց առաւօտեան ժամը 10էն կարճ ատեն ետք, ընկերակցութեամբ թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, Արեւելեան թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Օշական Արք. Զօլոյեանի եւ գաւազանակիր Հոգ. Տ. Մեսրոպ Վրդ. Սարգիսեանի: Առաջնորդարանի մուտքին, թափօրը դիմաւորուեցաւ թեմիս հոգեւորականաց դասու, ժողովականութեան, հովուապետական այցելութեան յանձնախումբի անդամներու կողմէ, որոնք կը կազմեն Ազգ. Առաջնորդարանի մեծ ընտանիքին կորիզը: Ներկայ էր նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան երեց անդամներէն Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան:

Վեհափառն ու հոգեւորականաց դասը առաջնորդուեցան «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատուռ, ուր տեղի ունեցաւ կանոնական աղօթք: Այնուհետեւ, Վեհափառ Հայրապետը ծանօթացաւ Առաջնորդարանի նոր շէնքի տարբեր բաժանմունքներուն: Յիշեցնենք, որ նախորդ հովուապետական այցելութեան առիթով, Նորին Ս. Օծութիւնը կատարած էր նոր շէնքի օրհնութիւնը եւ գմբէթի խաչին օծումը: Ան այս առիթով գոհունակութիւն

յայտնեց կառույցին վերջնական պատկերին, ինչպես նաև անոր յարկին ու հովանիին տակ ծառայ ստացած աշխատանքներուն համար:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԺՈՂՈՎԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Այնուհետև, Վեհափառը Հայրապետը »Սիլահեան« դահլիճին մէջ հանդիպումներ ունեցաւ յաջորդաբար Կոստական Ժողովի ու Ազգ. Վարչութեան անդամներուն հետ: Խորհրդակցութեանց մասնակից եղան Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամներ՝ Տեառք Խաժակ Տիքիճեան, Վահէ Եագուպեան եւ Տոքթ. Տրդատ Մանկիկեան (Արեւելեան Թեմէն, որ յատկապէս հովուապետական այցելութեան առիթով հասած է Լոս Անճելըս):

Երկու հանդիպումներուն, արծարծուեցան Թեմիս աշխատանքային դաշտերուն վերաբերող հարցեր, խորհրդակցութեան նիւթ եղան մարտահրաւերները դիմագրաւելու միջոցները: Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ Մայր Աթոռին ու Թեմիս միջեւ գործակցական դաշտերուն մասին ուղղակի հաղորդակցութեան կողքին, իր այս այցելութեան հիմնական նպատակներն են մղում տալ հոգեւոր կեանքի վերանորոգութեան, Հայ Դպրոցի վերածաղկումին ու մեր պահանջատիրութեան հետապնդման: Ան կարեւորութեամբ վեր առաւ հոգեւորականներու եւ վարչականներու իւրայատուկ պարտաւորութիւնները՝ հանդէպ ժողովուրդին ու յատկապէս երիտասարդութեան, մանուկներուն ու հայկական ուսումնարանին: Ան անելի ուշ, սրահին մէջ կազմակերպուած ճաշկերոյթ-հաւաքին, անելի մանրամասն կերպով արծարծեց այս հարցերը, ներկաները բաժնեկից դարձուց իր մտածումներուն ու յանձնարարութիւններուն:

Հանդիպումներու անարտին, Վեհափառ Հայրապետը պատասխանեց ժողովականներու հարցումներուն եւ կատարեց նոր ու յաւելեալ շեշտադրումներ:

ՃԱՇԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ազգ. իշխանութեանց հետ հանդիպումներէն ետք, Վեհափառ Հայրապետն ու Առաջնորդ Սրբազանները, հոգեւորականաց դասուն ընկերակցութեամբ, մուտք գործեցին «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահ, ուր համախմբուած էին զոյգ ժողովներուն, Հ.Յ.Դ. Կեդր. Կոմիտէի, հայկական միութեանց, Առաջնորդարանի յանձնախումբերուն, եկեղեցիներու հոգաբարձութեանց, Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինի ներկայացուցիչները, ինչպէս նաև տնօրէններ ու վարիչներ, Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Միութեան անդամները եւ Ազգ. Առաջնորդարանի անձնակազմը: Վեհափառ Հայրապետն ու ներկաները եղան Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին ճաշի հիւրերը:

Վեհափառ Հայրապետը օրինեց սեղանները: Առաջնորդ Սրբազանը ողջոյնի խօսք ուղղեց Վեհափառին, վեր առաւ այս այցելութեան կարեւորութիւնը, յայտնելով, որ սրահին մէջ համախմբուած են ժողովականութեան անմիջական գործակիցները: Ողջոյնի խօսք արտասանեց նաև Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ եւ Վեհափառի ընդունելութեան Գործադիր Մարմինի ատենապետներէն՝ Տիար Խաժակ

Տիքիճեան, որ ներկաներուն առաջարկեց յոտնկայս ողջունել Վեհափառն ու իմել անոր կենացը: Վերջապէս, Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան ձայնակցեցաւ ողջոյնի արտայայտութեանց, շնորհակալութիւն յայտնեց Վեհափառ Յայրապետին, որ ընդառաջած է հրաւերին ու Թեմս կը ծաղկեցնէ այս պատմական այցելութեամբ: Ան նաեւ ձայնակցեցաւ Տ. Օ. Մարմինին կազմակերպած հիւրասիրութիւնը գնահատողներուն:

«ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ Է ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ»

Ճաշի պահէն ետք, ու Վեհափառ Յայրապետը իր պատգամը տալու հրաւիրելէ առաջ, Առաջնորդ Սրբազանը յիշեցուց, որ նախորդ հովուապետական այցելութեան օրերուն, Ազգ. Առաջնորդարանի շէնքի շինարարութիւնը իր լրումին չէր հասած, իսկ այսօր, Վեհափառը ծանօթացած է կառոյցին ու գնահատանք արձանագրած է շէնքին ու անոր յարկին տակ տարուող աշխատանքին մասին: Ան նկատել տուաւ, որ Ազգ. Առաջնորդարանը ճանաչուած է իբրեւ Ազգին Տունը, իսկ Վեհափառ Յայրապետը այսօր մեզի հետ է իբրեւ տանտէր, հովուապետական այցելութիւնը կը սկսի Ազգ. Առաջնորդարանիս ընտանիքին հետ հանդիպումով:

Առաջնորդ Սրբազանը այս առիթով, յանուն Թեմիս ժողովականութեան ու գործակիցներուն, Վեհափառ Յայրապետին նուիրեց արուեստագետ Վաչէ Առաքելեանի գործերէն մէկը, որուն զարդանկարները նման են Անթիլիասի Վեհարանի զարդանկարներուն: Ապա՝ հրաւիրեց Վեհափառը ուղղելու իր պատգամը:

Վեհափառ Յայրապետը ողջունեց ներկաները եւ գոհունակութիւն արտայայտեց Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ ըլլալուն համար: Ան անակնկալ մը ունէր Առաջնորդ Սրբազանին ու Ազգ. Առաջնորդարանին. իբրեւ յուշանուէր՝ Նորին Ս. Օծութիւնը Առաջնորդ Սրբազանին յանձնեց Բարձրբերդի Աւետարանի էջերէն վերարտադրուած գեղանկար մը, նշելով, որ անկա Անթիլիասի ոգին ու յանձնառութիւնները խորհրդանշող գործ մըն է: «Անթիլիասը հաւատքի առաքելութիւն է ու ազգի ծառայութիւն», յայտարարեց Վեհափառը եւ շարունակեց. «Անթիլիասը սոսկական վայր մը չէ Լիբանանի մայրաքաղաքին մօտ, այլ կենդանի առաքելութիւն է, որ կը տարածուի անոր պատերէն անդին, ժողովուրդին ու բոլորիս կեանքին մէջ: Մեզի համար, հիմնական արժէք է հաւատարմութիւնը, դուք Անթիլիասի ընտանիքին հարազատ զաւակներն էք ու ձեր ներկայութեամբ ու գործքով կ'արտայայտէք ձեր հաւատարմութիւնը՝ հանդէպ Ս. Աթոռին ու անոր առաքելութեան»:

Ինչպէս նախընթաց երկու ժողովներուն ընթացքին, նոյնպէս ալ այս հաւաքին, Նորին Ս. Օծութիւնը հանգամանօրէն անդրադարձաւ այն հրամայականներուն, որոնք կը բխին առօրեայ աշխատանքներէն, աշխարհի փոփոխուող կացութիւններէն եւ յատկապէս հայութեան ուղղուած մարտահրաւերներէն: Ան վեր առաւ հոգեւորականներու առաքելութեան իմաստն ու աշխատանքներու առաջնորդումին մէջ կարեւորութիւնը, ինչպէս նաեւ Ազգ. Վարչութեան ու եկեղեցիներու

ժողովականության գործակիցի դերը՝ այս բոլորին մեջ: Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ մեր եկեղեցին եղած է, է՛ ու պիտի մնայ ժողովուրդին եկեղեցին, հետեւաբար, եթէ կայ ժողովուրդը եկեղեցւոյ կեանքին մասնակից դարձնելու պահանջ, կայ նաեւ եկեղեցին ժողովուրդին տանելու անհրաժեշտութիւն: «Մեր եկեղեցին մեր ժողովուրդն է, եկեղեցին առանց ժողովուրդի կը պարպուի իր իմաստէն ու առաքելութենէն, եկեղեցին ու անոր ծառայողները չեն կրնար անջատուիլ ժողովուրդէն», շեշտեց Վեհափառ Հայրապետը, նշելով, որ վերանորոգութեան ու աշխատանքներու աշխուժացման համար, կենսական են ժողովուրդի բոլոր զաւակներուն՝ երեցին, երիտասարդին, հայ կնոջ ու մանուկներուն մասնակցութիւնը՝ եկեղեցական կեանքին, հետեւաբար, թեմական աշխատանքները պետք է կազմակերպել այս նկատառումներով, համապարփակ մօտեցումով ու մեր կեանքը հարստացնող գործակցութեամբ:

Վեհափառ Հայրապետը դրուատիքով անդրադարձաւ Առաջնորդ Սրբազանին ու ազգային իշխանութիւններուն անձնդիր ծառայութեան, իսկ իր այս այցելութիւնը համեմատեց աշխատաքին պարտիզպանի մը, որ կը հոգայ ծառերն ու ծաղիկները: Ան կոչ ուղղեց առաւելագոյն ճիգը ընելու, որպէսզի մեր ժողովուրդն ու երիտասարդութիւնը ներգրաւուին մեր հաւաքական կեանքին մէջ, լուսանցքային վիճակի մէջ եղողներ բերուիլ գործի ասպարեզներու մէջ: Ան նաեւ անհրաժեշտ նկատեց, պատգամներ ու յորդորներ ուղղելու կողքին, լսել ժողովուրդն ու անսալ անոր պահանջներուն, ակնկալութիւններուն, խօսիլ երիտասարդութեան հետ, իսկ այս բոլորէն անդին, չբաւականանալ խօսելով ու զիրար լսելով, որովհետեւ ընելիքն ալ կարելոր է ու Անթիլիասը իր գործքով արդէն ներկայութիւն է մեր ժողովուրդի կեանքին մէջ, շնորհիւ անոր յարկին տակ պատրաստուող միաբաններուն:

Խօսելով Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան անդամներուն պատրաստութեան ու ժողովուրդին ծառայութեան գործընթացին մասին, Վեհափառ Հայրապետը յիշեցուց, որ թեմերուն ծառայութեան առաքուող իւրաքանչիւր միաբան Անթիլիասի կրակէն ճառագայթներ կը տարածէ մեր ժողովուրդի ծառայական կեանքին մէջ: Աշխատանքի ասպարեզներուն մէջ գործողներ կրնան մարդկային թերութիւններ ունենալ, սակայն պետք է իրազեկ ըլլալ ու վեր առնել իրագործումները, որոնք կը կատարուին ամենուրեք, ու պետք չէ անտեսել այդ իրագործումները:

Վեհափառ Հայրապետը իր պատգամին մէջ կարելորութեամբ վեր առաւ հովուապետական այս այցելութեան հիմնական նպատակները, որոնք են հոգեւոր կեանքի վերանորոգութիւն, ազգային դպրոցներու վերաշխուժացում եւ մեր արդար պահանջատիրութեան հզօրացում: Ան յիշեցուց, որ այս առաջադրանքները մաս կը կազմեն կաթողիկոսութեան հաւատքին ու առաքելութեան, ու այս ճամբան պիտի պահպանուի անշեղօրէն:

Եզրափակելով իր խօսքը, Վեհափառ Հայրապետը անգամ մը եւս գնահատանքով արտայայտուեցաւ Առաջնորդ Սրբազանին, Թեմի իշխանութիւններուն ու լծակիցներուն արդիւնաւոր աշխատանքին մասին եւ յորդորեց շարունակել նոյն հաւատքով, յանձնառութեամբ եւ վերանորոգ

կենսունակութեամբ, «Եւ այս բոլորին համար, Կաթողիկոսարանը ձեր կողքին է ու ամբողջականօրէն զօրակից», ըսաւ ան:

Յանդիպումը վերջ գտաւ Վեհափառ Յայրապետին օրհնութեամբ. ներկաները միասնաբար երգեցին «Կիլիկիա»ն: Այնուհետեւ, Վեհափառը յիշատակի լուսանկարներ ունեցաւ յանձնախումբերուն, դաստիարակներուն ու միութեանց անդամներուն հետ:

PONTIFICAL VISIT OF HIS HOLINESS ARAM I BEGINS AT THE WESTERN PRELACY

The fourth Pontifical Visit of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, to the Western Prelacy officially began on Thursday, October 6, 2011 with a visit to the Western Prelacy headquarters where he was greeted by over a hundred guests including Clergy, Executive Council, Ladies Auxiliary, Principals, Directors and Board of Regents members, representatives of sister organizations, and members of the various Pontifical Visit committees.

Upon his arrival, His Holiness was escorted to the "St. Dertad and St. Ashkhen" Chapel by H.E. Archbishop Moushegh Mardirossian and H.E. Archbishop Oshagan Choloyan, Prelates of the Western and Eastern United States respectively. His Holiness was accompanied by staff bearer Very Rev. Fr. Mesrob Sarkissian. Former Prelacy H.E. Archbishop Yeprem Tabakian also participated.

Following a canonical prayer service at the Chapel, His Holiness was familiarized with the various departments of the Prelacy and was led to the "Sulahian" Reception Hall for meetings with the Religious and Executive Councils. Central Executive members Mr. Khajag Dikijian, Mr. Vahe Yacoubian, and Dr. Dertad Mangikian (Eastern Prelacy) participated in the meetings.

During a discussion on challenges and concerns faced by the Church and Prelacies, His Holiness stressed that the primary focuses of his Pontifical visit are spiritual renewal, strengthening of Armenian Schools, and reinvigoration of the Armenian Cause, and emphasized the unique role of Clergy and Councils in these regards.

At the conclusion of the meetings, His Holiness was led by a procession of Clergy to the "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall where the guests had gathered for a luncheon organized by the Prelacy Ladies Auxiliary.

Following the invocation by His Holiness, welcoming remarks were delivered by the Prelate, Mr. Khajag Dikijian, and Executive Council Chair Mrs. Rima Boghossian.

Prior to inviting His Holiness to deliver his message and blessings, the Prelate addressed the guests stating that the Prelacy is the People's Home and as the Զիւնդաւոր of our homeՄՄ, His Holiness is beginning his Pontifical Visit with the Prelacy family. The Prelate then presented His Holiness with a hand-made glass painting by Canadian-Armenian artist Vatche Arakelian.

His Holiness greeted the guests, after which he invited the Prelate to present him with a gift, a beautiful reproduction of one of the pages of the ancient "Partser Pert" Gospel, which embodies the spirit of the Antelias. His Holiness continued, "Antelias is not just a city in Lebanon, it is a mission of faith and service which extends far beyond its physical walls. You are all children of the Antelias family, and with your service, you demonstrate your allegiance to the Holy See and its mission".

His Holiness stated that the Church has been and always will be the people's Church, and as such, we must not only bring people to the Church, we must bring the Church to the people. "Our Church is our people. Without the people there is no purpose, and that is why the active involvement of all our faithful, from the elderly to the young, women and children, is so vital." His Holiness also stated that it is crucial to hear the people, to listen attentively to the people and their needs and expectation and serve accordingly as Antelias does with its Brotherhood and Prelacies. Speaking of the Brotherhood members, His Holiness iterated that each member spreads the light of the Catholicosate within his community and surroundings.

His Holiness once again reminded the guests of the primary focus of the Pontifical Visit which is spiritual renewal, strengthening of Schools, and reinvigoration of the Armenian Cause, and concluded by commending the Prelate, Councils, and affiliated bodies for their service, urging them to continue with renewed faith and vigor.

The luncheon came to a close with the benediction by His Holiness and the collective singing of the Cilician anthem.